ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 08.08.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-30/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-30/14 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով Գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսհուր» ՍՊԸ-ի 2014 թվականի օգոստոսի 5-ի գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսհուր» ՍՊԸ-ի կողմից 05.08.2014թ. գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված «ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքների ամփոփումը և որոշումների կայացումը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել,

Կասեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիավառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքների ամփոփումը և որոշումների կայացումը՝ մինչև ԳԲԽ-30/14 բողոքը քննող հանձնաժողովի կողմից բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Բողոքը քննող հանձնաժողովի

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամներ՝ Համլետ Գասպարյան

Կարապետ Խարբերդյան